ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Բիոլ. և գյուղատնտ. գիտություններ IX, № 12, 1956 Биол. и сельхоз. науки

Ա. Ա. ԼԱԼԱՅԱՆ

Ն. Ի. ՊԻՐՈԳՈՎԸ ԵՎ ՆԱԽԱՍՈՎԵՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՀՅՆՈՒԹՅՈՒՆԸ

(Մահվան 75-ամյակի առթիվ)

Ռուս հռչակավոր վիրաբույժ և անատոմ Ն. Ի. Պիրոգովի անունը սերտորեն կապված է նաև հայ բժշկության հետ։ Այդ ամենից առաջ վերաբերում է Կովկասում Ն. Ի. Պիրոգովի ճանապարհորդությանը, որը հայրենական բժշկության պատմության հետաքրքրական և արժեքավոր էջերից մեկն է։ 1847 թվականին Ն. Ի. Պիրոգովը, իր ասիստենտ Գ. Յու. Նեմերտի և ավագ բուժակ Կալաշնիկովի հետ միասին, Պետերբուրգից գործուղվում է Կովկաս։ Գործուղման նպատակն էր՝ ռազմի դաշտում ուսումնասիրել էթերի գոլորշիների, որպես ցավազրկող միջոցի, ազդեցությունը վիրաբուժական օպերացիաների ժամանակ և այդ ուսուցանել տեղի զինվորական բժիշկներին։ Պիրոգովի գործուղման նպատակը միայն դրանով չէր սպառվում։ Նա պետք է փորձարկեր վիրավորներին տեղափոխելու միջոցները լեռնային պայմաններում, Կովկասի բժիշկներին հաղորդեր վիրաբուժական իր մեծարժեք փորձը, բացահայտելով տեղի հոսպիտալների և ընդհանրապես ռազմա-դաշտային բուժգնության բարելավման միջոցները։ Պիրոգովն իր հետ տանում էր էթերային նարկոզի համար անհրաժեշտ ապարատուրա և դեղորայք։

Դեռևս իր գործուղման ճանապարհին, Պյատիգորսկում, օգտվելով այն հանգամանքից, որ այդտեղ հիվանդների հետ միասին եկել էին նաև զգալի թվով զինվորական բժիշկներ, Պիրոգովը նրանց ցուցադրում է էթերի գոլորշիների գործադրումը։ Նոր միջոցը իր «մարտական մկրտությունը» ստանում է ռազմի դաշտում, Դաղստանի դաշտային լազարեթներում։ Միայն Սալթովի պաշարման ժամանակ, Պիրոգովը 100-ից ավելի վիրաբուժական օպերացիաներ է կատարում, որպես ցավազրկման միջոց կիրառելով էթերի գոլորշիները։ Ռազմա-դաշտային պայմաններում ապացուցելով էթերի գոլորշիների, որպես ցավազրկող միջոցի, պիտանիությունը, այդ միջոցը ներդրելով պրակտիկայում, կիրառելով այն և սովորեցնելով զինվորական բժիշկներին, Պիրոգովը դրանով չի սահմանափակվում։ Նա կիրառում է նաև իմմոբիլիզացնող վիրակապը, լուծում վերքերի մշակման բարդ հարցերը։

Ն. Ի. Պիրոգովը իր խորաթափանց մտքով բացահայտել է Կովկասի բժիշկների գործունեության առանձնահատկություններն ու դժվարությունները, ըստ արժանվույն բարձր գնահատելով նրանց աշխատանքը։

Ն. Ի. Պիրոգովը իր ճանապարհորդության նկարագրությունը և արդյունքներն ամփոփել է «Հաշվետվություն Կովկասում կատարված ճանապարհորդության վերաբերյալ» աշխատության մեջ, որտեղ տրված են նաև Պիրոգովի դիտողությունները ասիական տեղացի բժիշկների վերաբերյալ։ Այս հատվածը որոշակի նշանակություն ունի մասնավորապես Կովկասի բժշկության պատմության համար։ Պիրոգովը նշում է «ասիական բժիշկներից» ոմանց վարպետությունն ու փորձը հրազենային վերքերի բուժման գործում։

Խոսելով Թիֆլիսից ստացած իր տպավորությունների մասին, Ն. Ի. Պիրոգովը գրում էր. «Վերջին ժամանակներս Ռուսաստանից այստեղ են գալիս ավելի ու ավելի շատ բժիշկներ, իսկ տեղացիներից առավելապես հայերը ուղարկում են իրենց զավակներին մեր համալսարանները բժշկություն սովորելու և այժմ արդեն շատ հայ բժիշկներ կան ռուսական ծառայության մեջ» [1]։

Ականավոր գիտնականի ուշադրությունից չի վրիպել այն փաստը, որ հայերը դեռ շատ տարիներ առաջ մեծ ձգտում են հանդես բերել դեպի ռուս բժշկությունը։ Պետերբուրգի ռազմա-բժշկական ակադեմիայում Պիրոգովին աշակերտել են նաև հայ ուսանողներ, որոնք հետագայում ծառայել են ինչպես Ռուսաստանի տարբեր վայրերում, այնպես էլ Կովկասում։ Կովկասում ծառայած ռուս, հայ, վրացի և այլ ազգությունների պատկանող բժիշկները մեծ սիրով ու երախտագիտությամբ են նշել իրենց ուսուցիչ Ն. Ի. Պիրոգովի գործունեությունը։ Դրա փայլուն ապացույցներից մեկն է դեռևս 1865 թվականին նրան Կովկասյան բժշկական ընկերության

պատվավոր անդամ ընտրելը։ Այդ ընկերությունը, որ հիմնվել էր 1864 թվականին, իր գոյության առաջին իսկ տարում պատվավոր անդամ էր ընտրում Պիրոգովին։

Այդ նույն ժամանակաշրջանում էլ, սկսած անցյալ դարի 60-ական թվականներից, Ն. Ի. Պիրոգովի անունը հանդիպում է հայկական պարբերական մամուլի էջերում։

1868 թվականին «Հայկական Աշխարհ» հանդեսում հրատարակվել է Ն. Ա. Դոբրոլյուբովի «Քանի մի խոսք դաստիարակության վրա» վերնագիրը կրող հոդվածը, որտեղ բնութագրվում է Ն. Ի. Պիրոգովի «Կյանքի խնդիրները» աշխատությունը։ Հոդվածի ծանոթագրության մեջ Ն. Ի. Պիրոգովը հայ ընթերցողին է ներկայացվում հետևյալ խոսքերով՝ «Պիրոգովը Ռուսիայի երևելի մանկավարժ և լավ դոկտոր է»[2]։

Այս հոդվածում մենք նպատակ չունենք կանգ առնելու Ն. Ի. Պիրոգովի մանկավարժական հայացքների՝ հայ իրականության մեջ ունեցած արձագանքների վրա։ Այդպիսի արձագանքներն եղել են, և դրանց մեջ արժևորվել են նրա մատուցած ծառայությունները և բացահայտվել նրա սխալները, որոնք իր ժամանակին այնքան կրակոտ կերպով քննադատվեցին հատկապես Դոբրոլյուբովի կողմից։ Ուշադրության արժանի է այն փաստը, որ հայ իրականության մեջ Ն. Ի. Պիրոգովին որպես մանկավարժի բնութագրող հոդվածներում, թեպետ թռուցիկ կերպով, բայց և այնպես համարյա միշտ շեշտվում է նրա մատուցած հսկայական ծառայությունները ռուս բժշկության զարգացման գործին։

1881 թվականին լրացավ Ն. Ի. Պիրոգովի դիտական-մանկավարժական և հասարակական գործունեության 50-ամյակը։ Այս նշանավոր հոբելյանը իր ջերմ արձագանքը գտավ նաև Կովկասում։ Կովկասյան Բժշկական ընկերությունը հոբելյարին ուղարկեց ջերմ բովանդակությամբ ուղերձ[3]։

Պիրոգովի հոբելյանից շատ չանցած, Ռուսաստանի առաջավոր հասարակայնությունը խորին կսկիծով լսեց նրա մահվան լուրը, որը ծանր վշտով ընդունվեց նաև հայ իրականության մեջ։

Կովկասյան Բժշկական ընկերությունը, ի նշան մեծ Պիրոգովի մահվան կապակցությամբ խորը վշտի ու ցավակցության և նրա հիշատակի հանդեպ իր խորը հարգանքի, որոշեց ընդհատել իր 1881 թ. դեկտեմբերի 1-ի նիստը, որտեղ առաջին անգամ հայտնվում էր Ն. Ի. Պիրոգովի մահվան մասին։ Որոշվեց նաև սև շրջանակում հրատարակել ընկերության նիստի այն արձանագրությունը, որտեղ պետք է տեղեկություն հաղորդվեր Պիրոգովի մահվան մասին։ Ն. Ի. Պիրոգովի այրուն ուղղված հեռագրում Բժշկական ընկերությունը խորը ցավակցություն էր հայտնում իր սիրելի ուսուցչի մահվան առթիվ[4]։

Ն. Ի. Պիրոգովի մահվանից հետո անցած տարիների ընթացքում ոչ թե խամրում, այլ դնալով ավելի պայծառ է դառնում այդ մեծանուն գիտնականի հիշատակը։ Հայ հեղինակները մի շարք դեպքերում վկայակոչում են Ն. Ի. Պիրոգովի հեղինակությունը այս կամ այն հարցը մեկնաբանելու կապակցությամբ։ Այդպիսիներից է կանանց բարձրագույն կրթության հարցը։ Դեռևս 1886 թ. «Մշակ» թերթում[5] վերոհիշյալ հարցին նվիրված հոդվածում հեղինակն ընդարձակ մեջբերումներ է կատարում կանանց կրթության օգտին Ն. Ի. Պիրոգովի արտահայտած մտքերից։

Հայտնի է, թե ինչպիսի՛ կարևոր նշանակություն է տվել Ն. Ի. Պիրոգովը պրոֆիլակտիկ բժշկությանը՝ հիգիենային։ Պիրոգովյան այս գրությունը հայ իրականության մեջ պրոպագանդվել է մի շարք հայ բժիշկների, այդ թվում Ա. Բուդուղյանի կողմից։ 1910 թվականին Ա. Բուդուղյանը «Դյուզատնտես» շաբաթաթերթում տպագրած իր առողջապահական գրություններում, կանգ առնելով պրոֆիլակտիկ բժշկության նշանակության վրա, մեջբերում է Ն. Ի. Պիրոգովի խոսքերը. նա գրում է. «Հիշենք ամենամեծ բժիշկներից մեկի՝ հանգուցյալ Պիրոգովի խոսքերը.— «Բժշկական գիտության իսկական առաջադիմությունը առողջապահության մեջ է, ապագան պատկանում է նախազգուշացնող բժշկականությանը»[6]։

Ինքը Բուդուղյանը հայ իրականության մեջ պիրոգովյան վերոհիշյալ գրության կիրառման ասպարեզում մեծ գործ կատարեց որպես բժշկական գիտելիքների ժողովրդականացնող։

Կովկասի բժիշկներն ըստ արժանվույն բարձր են գնահատել մեծ Պիրոգովի ծառայությունները։ Իրա լավագույն ապացույցներից մեկն է 1906 թվականին Կովկասյան բժշկական ընկերության հանդիսավոր նիստը՝ նվիրված Ն. Ի. Պիրոգովի հիշատակին։

1906 թ. նոյեմբերի 23-ին Թիֆլիսում Կովկասյան բժշկական ընկերությունը նշեց Ն. Ի. Պիրոգովի մահվան 25-ամյակը։ Այդ հանդիսավոր իրադրությանը գործուն մասնակցություն ունեցան, բացի բժիշկներից, նաև մանկավարժները։ Հոբելյանական նիստում լսվեցին մի շարք

զեկուցումներ՝ նվիրված Ն. Ի. Պիրոգովի կյանքին ու գործունեությանը և նրա դերին հայրենական գիտության զարգացման գործում։

Այդ հանդիսավոր նիստին գործուն մասնակցություն ունեցան նաև հայազգի բժիշկները։ Լ. Բ. Փիրազովը զեկուցեց «Ն. Ի. Պիրոգովի կյանքի և գործունեության համառոտ ակնարկ» թեմայով [7]։

1910 թվականին լրացավ Ն. Ի. Պիրոգովի ծննդյան 100-ամյակը, որը Ռուսաստանի առաջավոր հասարակության կողմից մեծ սիրով ու երախտագիտությամբ նշվեց Մոսկվայում, Պետերբուրգում, Խարկովում և այլուր։ Իրա շերմ արձագանքները լսվեցին նաև հայ իրականության մեջ։

1910 թվականին «Մշակ» թերթում հրապարակվեց «Մեծ հումանիստը» [8] վերնագրով ընդարձակ հոդվածը՝ նվիրված Ն. Ի. Պիրոգովի ծննդյան 100-ամյակին։ Այս հոդվածում տրված է Պիրոգովի կենսագրությունը՝ թերթի ծավալի համար բավականաչափ ընդարձակ չափով։ Հոդվածագիրը չի թաքցնում իր հիացմունքը ռուս մեծ գիտնականի ծառայությունները արժևորավորելիս։ Նա Պիրոգովին որակում է որպես «բժշկության տիտան», «փայլուն անուն», «տաղանդավոր գիտնական», «աշխարհահռչակ բժիշկ», «մեծ հումանիստ»։ Հոդվածագիրը նշում է, որ Պիրոգովի անունը նոր դարագլուխ է կազմում ռուս բժշկության մեջ։ Վերոհիշյալ հոդվածը գրված է Մոսկվայից, և հեղինակը նկարագրում է, թե ինչպիսի միջոցառումներ են ձեռնարկված և նախատեսվում Պիրոգովի ծննդյան 100-ամյակը հավերժացնելու համար։ Հոդվածում բերվում են փաստեր այն մասին, որ ցարական ադմինիստրացիան ամեն կերպ ձգտել է արգելակել Պիրոգովյան հոբելյանի կատարումը։

Նշելով, որ Մոսկվայում տեղի ունեցան Պիրոգովին նվիրված երեկոներ և ժողովներ, հեղինակն ավելացնում է. «Իսկ ժողովներից մի քանիսը չթույլատրվեցին նույնիսկ քաղաքապետի կողմից»։

Մոսկվայի համալսարանում Պիրոգովի հիշատակին նվիրված հանդիսավոր նիստը ոստիկանության ներկայացուցչի կարգադրությամբ ընդհատվեց։ Մասնակիցները դուրս եկան և բողոքեցին.

«Պատճա՞ռը,— լսվեց հասարակության ալդաբացի բողոքը։

— Որովհետև ճառերը անցանկանալի բնույթ են ստանում,— մեկնաբանում է պրիստավը, որից հետո պրոֆ. Ռեյներ դառնալով հասարակությանը, հայտարարում է, որ ժողովը փակվում է ոստիկանության ներկայացուցչի պահանջի համաձայն։

Այնուհետև, պատմում է հոդվածագիրը, որպես այդ ամենի ականատես, մենք ստիպված եղանք ցրվելու, ի՞նչպես»։

1911 թվականին «Մշակ» թերթում «Պիրոգովի հիշատակին» [9] վերնագիրը կրող հոդվածում նկարագրվում է Խարկովի բժշկական ընկերության հանդիսավոր ժողովը՝ նվիրված Ն. Ի. Պիրոգովի ծննդյան 100-ամյակին։

Հեղինակը՝ Խարկովի համալսարանի բժշկական ֆակուլտետի մի հայ ուսանող, իր հոդվածում մի շարք քաղվածքներ է բերում այդ հանդիսավոր ժողովում Ն. Ի. Պիրոգովի կյանքի և գործունեության վերաբերյալ կարդացված զեկուցումներից։

Վերը նշված հոդվածը Ն. Ի. Պիրոգովին նվիրված հանդիսավոր երեկոյի սոսկ նկարագրություն չէ։ Այստեղ հեղինակն արտահայտել է իր ջերմ, հիացմունքով լի վերաբերմունքը ռուս մեծ գիտնականի հիշատակի նկատմամբ։ Նա գրում է, որ մեծ, հանճարեղ մարդիկ անմահ են, քանի որ ժողովուրդը, այն ժողովուրդը, որին նրանք սիրել և ծառայել են, իր մեջ վառ ու անմահ է պահում դրանց հիշատակը։ Հեղինակը դրանց շարքին է դասում ռուս ազգի մեծ զավակ Պիրոգովին, որի ստեղծագործությունները նրա մահվանից շատ տարիներ հետո մնացել են կանգուն և կենդանի։

«Նոր դպրոցս հանդեսում տպագրվեց հատուկ հոդված՝ նվիրված Ն. Ի. Պիրոգովի ծննդյան 100-ամյակին» [10]։

Այսպիսով, Ն. Ի. Պիրոգովի ծննդյան 100-ամյակի հոբելյանը ջերմ արձագանք գտավ նաև հայ պարբերական մամուլի էջերում, որտեղ բարձր արժևորվեցին Պիրոգովի մատուցած հսկայական ծառայությունները ռուս բժշկության զարգացման գործում։ Ն. Ի. Պիրոգովի ծննդյան 100-ամյակը նշվեց նաև Կովկասյան բժշկական ընկերության կողմից, Թիֆլիսում։ Կովկասյան բժշկական ընկերության այդ ժամանակվա նախագահ Ս. Ս. Իստամանյանը նույն ընկերության 1910 թ. նոյեմբերի 13-ի նիստում Ն. Ի. Պիրոգովի հիշատակին նվիրված իր հակիրճ

խոսքում նրան բնորոշում է որպես ռուս բժշկության լուսատու, որի անունը սիրելի է ամեն մի ռուս բժշկի համար։ Հոտնկայս հարգելով Պիրոգովի հիշատակը, ընկերության անունից Մոսկվա՝ Պիրոգովի անվան ռուս բժիշկների ընկերության վարչությանը հեռագիր է ուղարկվում։ Այդ հեռագրում ասվում էր, որ բովանդակ Ռուսաստանի բժիշկների հետ մեկտեղ Կովկասյան բժշկական ընկերությունը նշանավորելով Ն. Ի. Պիրոգովի ծննդյան 100-ամյակը, Պիրոգովյան ընկերությանը իր երախտագիտությունն է հայտնում մեծ ուսուցչի հիշատակը հավերժացման ձգտման— նրա անվան տուն հիմնելու կապակցությամբ և իր նվիրարերությունն է ուղարկում այդ վեհ նպատակին [11]։

Ն. Ի. Պիրոգովի ծննդյան 100-ամյակին նվիրված՝ Կովկասյան բժշկական ընկերության նիստում գիտական զեկուցումով հանդես եկավ հայազգի բժիշկ Գ. Ն. Տեր-Ներսեսովը։ Դեռևս 1901 թ. ավարտելով Մոսկվայի համալսարանը, Գ. Ն. Տեր-Ներսեսովը վիրաբուժության մեջ մասնագիտացավ պրոֆ. Տրոյանովի մոտ, նախկին Օբուխովյան հիվանդանոցում։ Բաքվում և Շամախիում, իսկ հետագայում Թիֆլիսում, Գ. Ն. Տեր-Ներսեսովը իրավամբ վարպետ վիրաբույժի հռչակ էր վայելում։ Նա ապրեց մինչև մեր օրերը, Կովկասում ծավալելով իր փայլուն վիրաբուժական գործունեությունը։ Գ. Ն. Տեր-Ներսեսովի գրչին են պատկանում մի քանի տասնյակ գիտահետազոտական աշխատանքներ։

Ն. Ի. Պիրոգովի հոբելյանին նվիրված վերոհիշյալ նիստում Գ. Ն. Տեր-Ներսեսովը հանդես եկավ «Ուղեղի գլիոսարկոմայի դեպք» վերնագիրը կրող զեկուցմամբ, որը հեղինակը նվիրում էր Ն. Ի. Պիրոգովի հիշատակին։

Ն. Ի. Պիրոգովի հիշատակը այդպես էլ միշտ վառ ու պայծառ մնաց նաև հայ բժիշկների սրտերում։

Ստացվել է 24. IX—1956 թ.

А. А. ЛАЛАЯН

Н. И. ПИРОГОВ И ДОСОВЕТСКАЯ АРМЯНСКАЯ МЕДИЦИНСКАЯ ОБЩЕСТВЕННОСТЬ

Резюме

В работе представлены материалы, относящиеся в основном к откликам учения Н. И. Пирогова и оценке его заслуг со стороны врачей Кавказа, в особенности армян.

Приведенные факты свидетельствуют о том, что память о Н. И. Пирогове всегда была и останется ярким и светлым в сердцах также врачей-армян.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Пирогов Н. И. Отчет о путешествии по Кавказу, Медгиз, 1952.
2. «Հայկական Աշխարհ», № 8, 1868 թ.։
3. Протокол заседания Кавказского мецицинского общества от 2 мая, № 2, стр. 13—14. 1881 г.
4. Протокол заседания Кавказского медицинского общества от 1 декабря, № 11, 1881.
5. «Մշակ», № 133, 1886 թ.։
6. «Գյուղատնտես», № 6, էջ 86, 1910 թ.։
7. Протокол торжественного заседания Кавказского медицинского общества, посвященного памяти Н. И. Пирогова, № 11 от 23 ноября 1906 г.
8. «Մշակ», № 280, 1910 թ.։
9. «Մշակ», № 17, 1911 թ.։
10. «Նոր-դպրոց», № 12, 1910 թ.։
11. Протокол заседания Кавказского медицинского общества № 10, от 13 ноября 1910 г.